



ԼԵՐ ԿԱՄՍԱՊ

Ազգային նոթեր

Մեր կառավարությունը այս օրերս պատվիրակություն մը դրկեց Եվրոպա՝ հայկական վեց վիլայեթները խնդրելու համար: Գնացողները բոլորն ալ ռուսահայեր են և պիտի թյուրքահայերու համար երկիր խնդրեն:

Երեկ կնիկս դրկեցի հացի «կնիժկան» փոխելու, չէին տվեր, ըսեր էին «գնա՛, թող մարդդ գա, «կնիժկան» մարդուդ անունովն է»: Ու այսօր չորս ու կես ժամ հերթ են պահեր գրասենյակին դռանը, ետևս ունենալով կամարլեցի այրի մը ու առաջիս տասներկու տարեկան մանչ մը:

Արդ, այն կառավարությունը, որուն պաշտոնյաները մեկ ֆնտանոց հացի չեկ անգամ չեն վստահեր մեկի մը, որ «կնիժկային» տիրոջ կնիկն է, որ ըստ եկեղեցու «երկոքյան մարմին մի» են, կըսեն. այդ կառավարությանը ինտո՞ր թույլ կուտա իրեն երթալ Եվրոպա և ուրիշի անունով վեց վիլայեթ խնդրել: Պիտի ըսե՛ն՝ «թյուրքահայերը անոնց եղբայրներն են»: Ճշմարիտ է, այո՛, սակայն ինչքան ալ եղբայր ըլլան, ամուսիններու պես կապված չեն իրար: Եղբայրներ մեծնալիս կկոպին իրար հետ, կծեծեն զիրար: Կամ թե, եթե իրոք եղբայր են, ի՞նչ արգելք կա, որ երկու եղբայրներ իրարու ձեռք բռնած Եվրոպա երթան: Եթե ռուսահայերը կատարկեն, թե տաճկահայ եղբայրները ներկայանալի արտաքին մը չունին, կամ լեզու չեն գիտեր, ավելի աղեկ, թող եվրոպացիք անոնց խեղճ վիճակը տեսնեն ու շատ կարելի է, վից վիլայեթի տեղը յոթը կուտան:

Չէ, խնդիրը սկզբունքն է:

Կամ պետք է ով որ «կնիժկա» տանի՝ փոխեն, կամ եթե չեն փոխեր, պետք չէ ուրիշի անունով Եվրոպա երթան ու վեց վիլայեթ խնդրեն:

Ես այսպես գիտեմ:

1919թ.